ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Մկրտիչ Կարապետի Շաքարյանի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԱՏՇԱՃ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԵՂԵՐԻ ՊԱՏՇԱՃ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված ԺԵ.00.01-«Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ԱՊՀ երկրներում դեղագործական տնտեսության տարերային ձևավորումը՝ համապատասխան օրենսդրական դաշտի և փորձի բացակայության պայմաններում, առաջ քաշեց բազմաթիվ հիմնախնդիրներ (տեղական և ներկրվող դեղերի որակի ապահովումը, դեղատների անհավասարաչափ բաշխումը, բնակչության դեղորայքային ապահովումը, անհսկելի ինքնաբուժումը և այլն), որոնք առ այսօր մանրակրկիտ ուսումնասիրության և գիտականորեն հիմնավորված լուծումների կարիք ունեն:

Այս տեսանկյունից Մկրտիչ Շաքարյանի ատենախոսական աշխատանքը, նվիրված Հայաստանում դեղերի պատշաճ արտադրական գործունեության (ՊԱԳ-ի) և պատշաճ բաշխման գործունեության (ՊԲԳ-ի) համակարգերի ներդրման մեխանիզմների գիտական հիմնավորմանը և մշակմանը, արդիական է և կարևոր նշանակություն ունի: Հետևաբար, միանգամայն ուշագրավ է ատենախոսի կողմից դեղի որակի ապահովման հետ կապված խնդիրների համալիր հետազոտումը՝ վերոնշյալ համակարգերի գործնական կիրառման հնարավորություններ ստեղծելու համար:

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանի Հանրապետությունում ձևավորվեց նոր տնտեսություն՝ իր այնպիսի հատկանիշներով, որոնք բացակայում էին խորհրդային տարիներին (դեղատների սեփականաշնորհում, մրցակցություն, տեղական արտադրողների և մատակարարների թվի աճ, փոփոխություններ օրենսդրական դաշտում, շուկայական հարաբերություններ և այլն): Ժամանակը թելադրում էր ունենալ միջազգային պահանջներին և չափանիշներին բավարարող դեղագործական կազմակերպություններ՝ արտադրողներ և մատակարարներ:

Դեղը, առանց որի դժվար է պատկերացնել ժամանակակից բժշկական օգնությունը,

առանձնահատուկ ապրանք է. դեղի արտադրության, տեղափոխման, պահպանման և նույնիսկ ոչնչացման համար պահանջվում են հատուկ պայմաններ:

Դեղերի ողջ շրջանառության ընթացքում ՊԱԳ-ի և ՊԲԳ-ի ներդրման հարցը խիստ արդիական է, քանի որ այս խնդրի լուծումը մի կողմից բնակչությանն ապահովում է որակյալ, արդյունավետ և անվտանգ դեղերով, մյուս կողմից՝ առկա բարձր մրցակցության պայմաններում նպաստում է դեղագործական կազմակերպությունների (արտադրողների և մատակարարների) ապրանքաշրջանառության աճին:

Աշխարհի բազմաթիվ երկրներում դեղերի որակի ապահովման նպատակով ներդրվել են ՊԱԳ-ի և ՊԲԳ-ի կանոնները, որոնք այդ երկրների կարգավորող մարմինների կողմից կարևորվում են դեղերի շրջանառության, մասնավորապես՝ դեղագործական ընկերությունների գործունեության կարգավորման համար:

Քանի որ առանց դեղերի ՊԱԳ-ի և ՊԲԳ-ի համակարգերի ներդրման ՀՀ Առողջապահության նախարարությունը չի կարող երաշխիքներ տրամադրել, որ մեր երկրում շրջանառվող դեղերն արտադրվել և մատակարարվել են՝ ապահովելով դրանց որակը, տրամաբանական է, որ Մ.Շաքարյանի ատենախոսության հիմնական նպատակն է եղել մշակել ՊԱԳ և ՊԲԳ համակարգերի ՀՀ-ում ներդրման մեխանիզմների գիտական հիմնադրույթները:

Ատենախոսության ծավալը կազմում է 135 տպագիր էջ, բաղկացած է ներածությունից, գրականության ակնարկից, երեք գլուխներից, 185 գրականական սկզբնաղբյուր պարունակող գրականության ցանկից: Հետազոտությունները լուսաբանվել են են 13 աղյուսակներով և 16 նկարներով: Հրատարակված աշխատանքները և հետազոտության արդյունքների փորձաքննությունը լիովին համապատասխանում են թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին:

Ատենախոսության «Ներածություն» բաժնում շարադրված է աշխատանքի հստակ նպատակը, և այն իրագործելու համար ատենախոսի կողմից առաջադրվել են բազմաթիվ իրատեսական խնդիրներ:

Գրական ակնարկում ներկայացված է ՊԱԳ-ի և ՊԲԳ-ի համակարգերի նշանակությանը առնչվող գիտական աղբյուրների համակողմանի ուսումնասիրությունը, ինչպես նաև տարբեր երկրներում դրանց բացակայության հետևանքների քննադատական վերլուծությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերաբերվում է հետազոտության նյութին, կիրառված ժամանակակից մեթոդներին, համակարգչային ծրագրերին, որոնց միջոցով կատարվել են տվյալների հաշվարկը և վիճակագրական մշակումը:

Հեղինակի սեփական հետազոտությունների տվյալներն ընդգրկված են ատենախոսության 3-րդ գլխում, որտեղ հանգամանալից ներկայացված են դրված խնդիրների իրագործման արդյունքները և տվյալների վերլուծությունը: Իրականացված հետազոտությունների հիման վրա հեղինակի կողմից առաջին անգամ մշակվել է դեղերի որակի ապահովման գիտականորեն հիմնավորված, հայեցակարգային մոդել:

Աշխատանքի գիտա-գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ այն պահանջված է մեր երկրի առողջապահության և դեղագործության ոլորտները կարգավորող մարմինների կողմից, քանի որ աշխատանքում արծարծված խնդիրների լուծումը թույլ կտա մշակել ՊԱԳ-ի և ՊԲԳ-ի կանոնները ներդնելու, հսկելու և պահպանելու այնպիսի ուղիներ, որոնք համապատասխանում են և՛ միջազգային պահանջներին, և՛ Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմաններին:

Մ.Կ.Շաքարյանի ուսումնասիրությունների գիտական և գործնական արժեքի մասին փաստում են հետխորհրդային երկրների կողմից այս աշխատանքի հիման վրա կատարված առաջարկությունների կիրառումը:

Հետազոտության ընթացքում հեղինակն օգտագործել է տրամաբանական, հետահայաց վերլուծության, իրավիճակային, կոնտենտ վերլուծության, փորձագիտական գնահատման, վիճակագրական և այլ մեթոդներ, որոնք համապատասխանում են ատենախոսության նպատակներին ու խնդիրներին:

Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով աշխատանքը և ատենախոսության բովանդակության վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունենալով՝ այնուամենայնիվ, հարկ ենք համարում անդրադառնալ որոշ դիտողությունների.

1. Ուսումնասիրությունների մի մասն ատենախոսն իրականացրել է հարցաթերթիկային հարցման եղանակով, որի հավաստիության (վստահելիության) համար անհրաժեշտ են կոնկրետ թվեր և տվյալներ, որոնք բացակայում են. երբ է իրականացվել հարցումը, ովքեր են պատասխանել, քանի հոգի է մասնակցել հարցմանը, ինչպես է որոշվել մասնակիցների թիվը և այլն:

2. Ատենախոսության «Հետազոտության արդյունքները և դրանց քննարկումը» գլխում բազմիցս հանդիպում են գրականության հղումներ և վերլուծություն, որոնք առավել նպատակահարմար կլիներ ընդգրկել ատենախոսության առաջին՝ «Գրականության վերլուծություն» գլխում:

3. Ատենախոսության գործնական առաջարկություններից վերջինը, որով ատենախոսը ՀՀ կառավարության բնապահպանության ոլորտի լիազոր մարմնին առաջարկում է կառավարել դեղերի արտադրության ընթացքում արտանետումներից առաջացող ռիսկերը, գիտական հիմնավորում չունի, քանի որ մինչ այդ հեղինակը ատենախոսության մեջ այս հիմնախնդրին երբևէ չի անդրադարձել:

4. Կան խմբագրման կարիք ունեցող առանձին արտահայտություններ, բացթողումներ, վրիպակներ, որոնք, թերևս, մեծածավալ աշխատանքներում բացառված չեն: Օրինակ՝

- Կիրառված որոշ մեթոդներ հստակ նկարագրված չեն, նաև նշված չեն դրանց սկզբնաղբյուրները: Բացակայում են հարցաթերթիկների հղումները. պարզ չի՝ հեղինակն ինքն է կազմել դրանք, թե օգտվել է պատրաստի հարցաթերթիկներից:
- Աշխատանքի 88-89 էջերում ատենախոսը թվարկված կետերը ներկայացրել է որպես եզրակացություններ, որոնցից 5-ը ձևակերպված են որպես առաջարկություններ: Վերջիններս կարելի էր ընդգրկել վերջնական գործնական առաջարկությունների ցանկում:
- Ատենախոսության մեջ բացակայում է «Հավելված» բաժինը, որտեղ կարելի էր տեղադրել այս աշխատանքի դրույթների ներդրման ակտերը, որոնք հեղինակը ստացել է ԱՊՀ երկրներից, հարցաթերթիկների օրինակներ և այլ նյութեր:

Այս դիտողությունները հիմնարար չեն և չեն նվազեցնում ներկայացված աշխատանքի մասին դրական տպավորությունը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայացված հետազոտությունը կատարվել է թեկնածուական ատենախոսության շրջանակներում և առաջիկայում հնարավոր է ու անհրաժեշտ է շարունակել, վերոնշյալ դիտողությունները սկզբունքայնորեն չեն նսեմացնում ներկայացված աշխատանքի գիտական արժեքը, և Մկրտիչ Շաքարյանի ատենախոսական աշխատանքն իր գիտական մակարդակով,

արդիականությամբ, ծավալով, ստացված արդյունքներով, կիրառական նշանակությամբ բավարարում է թեկնածուական ատենախոսության պահանջներին:

Այսպիսով՝ ԺԵ 00.01 - «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված Մկրտիչ Շաքարյանի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պատշաճ արտադրական գործունեության և դեղերի պատշաճ բաշխման գործունեության համակարգերի ներդրման մեխանիզմների գիտական հիմնավորումների մշակումը» թեմայով ատենախոսական աշխատանքը ավարտուն գիտական հետազոտություն է, բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող 7-րդ կետի բոլոր պահանջներին, և ատենախոսն արժանի է ստանալու դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Երևանի Մ. Հերացու անվան
պետական բժշկական համալսարանի
Դեղագործության կառավարման
ամբիոնի վարիչ,
դեղագործական գիտությունների դոկտոր՝

Մարգարիտ Հրանտի Բեգլարյան _____

Մարգարիտ Հրանտի Բեգլարյանի ստորագրությունը
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ԵՊԲՀ գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝

Տ.Գ. Ավագյան _____

«11» սեպտեմբերի 2020 թ.